



# Ազդարարության Trumpet's Sound **փող**

49-րդ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱԼԻԱ  
ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2018



# Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION  
PUBLISHED BY THE  
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH  
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,  
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJJIAN  
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH  
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057  
email: [pastor@armenianbrethren.org](mailto:pastor@armenianbrethren.org)  
URL: [www.acmaust.org](http://www.acmaust.org)

«ԱԶԳԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՎ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ Իովիվ Հրաչ Գույունյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Ի՞նչ եմ ասում Իմ մասին, ո՞վ եմ Ես...».....Հովիվ՝ Հրաչ Գույունյան

Ղովտի ընտրությունը ..... Դոն Սթորմըր

«Գնացե՛ք... և ավետարանը քարոզեցե՛ք».....Մանկանց ավետ. ընկ.

Դրամատան հաշիվը.....Քաղված

Կործանված՝ թղթախաղի պատճառով.....Քաղված

Եկեղեցու պատմությունը (2) ..... ՉՄԵԿ պանորամա

«Որովհետև Ես՝ Տերս, չեմ փոփոխվի» ..... Դոկտ. Չեսլով Բասսարա

Հավերժացրե՛ք պահը ..... Ռեքս Տիրլավ

Ներման բերկրանքը .....Հովիվ՝ Հովսեփ Հովսեփյան

Փոխարինված խաչը .....Քաղված

Եթե Հիսուսը հիմա գար .....Քաղված

Լոբիով լի կողովը.....Պատ. Աբրահամ Սարգիսյան

Արևշատ գյուղում.....Քաղված

## **«Ի՞նչ են ասում Իմ մասին, ո՞վ են Ես...»**

«Դուք ի՞նչ եք ասում Իմ մասին, ո՞վ են Ես» հարցը Տեր Հիսուսի՝ Իր աշակերտներին տված հարցերից մեկն է: Սիրում են Պետրոսի անմիջական, անկասկած ու անվարան արձագանքը: Նա ասաց. «Դու ես Քրիստոսը» (Մարկ. 8:29): «Քրիստոս» եբրայերեն «Մեսիա» բառի հունարեն տարբերակն է: Հայերեն նշանակում է Օծյալ: Պետրոսը գիտակցեց Տեր Հիսուսի մեծությունը:

Հարցն այսօր նույնպես հնչում է. «Դուք ի՞նչ եք ասում Իմ մասին, ո՞վ են Ես»: Մեր կյանքում բոլորս գոնե մեկ անգամ պետք է պատասխանենք այս հարցին՝ անկախ երիտասարդ կամ ծեր, հիվանդ կամ առողջ, աղքատ կամ հարուստ լինելուց, հնարավոր է նաև՝ մեր մահվան անկողնում: Այս հարցը մշտապես ներկա է լինելու: Եթե խոսքերով չենք արձագանքում, ապա մեր գործողությունները կմատնեն մեր պատասխանը:

«Դուք ի՞նչ եք ասում Իմ մասին, ո՞վ են Ես»: Տեր Հիսուսը ոչ միայն եկավ որպես Աստծո Օծյալ, այլև որպես մեր Փրկիչ: Իրականում Հիսուս անունը նշանակում է «Եհովան Փրկիչ է»:

Մենք Փրկչի կարիք ունենք: Ինչո՞ւ. մեր անցյալի և ներկայի մեղքերի պատճառով: Նա եկավ, որպեսզի փրկի մեզ մեր մեղքերից և հույս ու ուրախություն պարգևի: Նա եկավ՝ մեր հոգիները վերականգնելու և Իր մեջ մեզ նոր դարձնելու:

Մինչ Մարիամը նստած էր Հիսուսի ոտքերի մոտ ու լսում էր Նրա խոսքերը, Մարթան մտահոգված էր ճաշի նախապատրաստական աշխատանքներով: Նա մոտեցավ Հիսուսին և ասաց. «Տե՛ր, հոգո չէ՞, որ քույրս ինձ միայնակ թողեց ծառայության մեջ, ասա՛ նրան, որ օգնի ինձ»: Հիսուսը պատասխանեց. «Մարթա՛, Մարթա՛, դու շատ բաների մասին ես հոգ անում ու տազնապում, բայց մեկ բան է պետք. Մարիամն այն բարի բաժինն ընտրեց, որը չպիտի վերցվի նրանից»:

Երբեմն շատ խնդիրներով ենք մտահոգվում և ժամանակ չենք ունենում մեր կյանքի ամենակարևորի համար: Կարծում ենք, որ եթե օգնենք աղքատներին և աղոթենք մեր կարիքների համար, լավ քրիստոնյա կլինենք: Կարծում ենք, որ եթե ջանք թափենք և կիրակի օրերը եկեղեցի գնանք ու առողջություն խնդրենք, ապա ընդունելի կդառնանք Նրա առջև: Սակայն Հիսուսը բանկոմատ չէ: Նա ճանապարհը, ճշմարտությունը և կյանքն է. ոչ մեկը Հորը չի գա, բացի Նրանով (Հովհ. 14:6):

Վերջին անգամ ե՞րբ ես լռության մեջ արձագանքել «Դուք ի՞նչ եք ասում Իմ մասին, ո՞վ եմ Ես» հարցին: Դուք ստիպված եք պատասխանել, այլապես ձեր գործողությունները կմատնեն ձեզ:

Թովմասն ասաց. «Իմ Տեր և իմ Աստված» (Հովհ. 20:28), ու ծուկի եկավ: Երբ Հիսուսի մոտ ենք գալիս, Նրան այսպես պետք է ճանաչենք, այնուհետև երկրպագենք: Մենք պետք է արձագանքենք այդ հարցին նախքան Նրան երկրպագել սկսելը:

Դուք կարող եք երկյուղ ունենալ կամ հարգել Նրան և անել այն, ինչ Նրան է հաճելի, բայց եթե ապաշխարությամբ չդիմեք Փրկչին, եթե Նրան չդարձնեք ձեր կյանքի Տերն ու Թագավորը, եթե Նրան չդիմեք՝ ասելով. «Իմ Տեր և իմ Աստված», ապա ձեր կյանքը չի փոխվի:

«Աստված Հոգի է, և Նրան պաշտողները պետք է հոգով և ճշմարտությամբ պաշտեն» (Հովհ. 4:24):

Իմ աղոթքն է, որ այդ հարցին պատասխանեք հիմա և այստեղ, որպեսզի Նա կարողանա ուրախություն և խաղաղություն պարգևել ձեզ: Հիսուսը թողեց Երկնքի փառքը, մարդկային կերպարանք ստացավ, բոլորի կողմից ատելի դարձավ և խաչի վրա մահացավ ողջ մարդկության փրկության համար: Ձեր պատասխանը վկայելու է ձեր դեմ, քանի որ եթե մերժեք Նրան, ապա ինքներդ ձեզ դատապարտած կլինեք:

Հ. Գ.



## **Ղովտի ընտրությունը**

**(Կարդացե՛ք Ծննդոց 13-րդ գլուխը)**

**Ա**բրահամն ու Ղովտը Եգիպտոսից վերադարձան այնտեղ, որտեղ առաջ էին գտնվում: Շատ ժամանակ չանցած՝ երկու տղամարդկանց տարբեր առաջնահերթություններն ի հայտ եկան:

Աբրահամը Եգիպտոսից վերադարձավ և գնաց Քանանի հարավային կողմը: Մեր ուշադրությունը գրավում է այն փաստը, որ նա վերադարձավ Բեթել՝ այն վայրը, որտեղ իր վրանն էր բացել սկզբում, այն վայրը, որտեղ գոհասեղան էր պատրաստել: Թեև մեզ հայտնի չէ, սակայն ենթադրում ենք, որ Աբրահամը Եգիպտոսում գոհասեղան չէր կառուցել: Եվ այսպես նա վերադարձավ այնտեղ, որտեղին պատկանում էր: Կարևորն այն էր, որ Աբրահամը սկսեց նորից երկրպագել Տիրոջն այն ձևով, որը նշանակում էր, որ նա Աստծո հավատարիմ ծառան էր: Նա կանչեց Տիրոջ անունը:

Սակայն շուտով խնդիր առաջացավ: Աբրահամը չափազանց հարուստ էր, Ղովտն էլ ուներ հսկայական հոտեր և արջարներ: Իրար հետ համերաշխ ապրելը գնալով դժվարանում էր ոչ թե իրար մեջ խնդիրներ ունենալու, այլ նրանց հովիվների միջև եղած լարվածության պատճառով: Երկուսի համար բավականաչափ արոտավայր չուկար, որպեսզի իրար մոտ ապրեին: Ուստի ստիպված էին իրարից բաժանվել և տարբեր ուղիներով գնալ: Հարցն ավելի վատթարացավ այս տարածքում գտնվող քանանացիների և փերեզացիների ներկայության պատճառով: Հեթանոսների աչքի առջև ճշմարիտ Աստծո հետևորդների վեճը վատ վկայություն էր, և նրանք Աբրահամի երկրպագած Աստծո մասին վատ կարծիք կկազմեին: Լավ վկայություն թողնելը և ընտանեկան համերաշխություն պահպանելը ոչ միայն ցանկալի դարձրին իրարից բաժանվելը, այլև անհրաժեշտ:

Աբրահամը, տարիքով մեծ լինելով, իրավունք ուներ առաջինը որոշելու, թե որ կողմը գնար: Այնուամենայնիվ տեսնում ենք, որ իր եղբորորդուն շատ բարյացակամ առաջարկ արեց: Նա որոշեց այդպես անել, որպեսզի ցույց տա, որ ընտանիքների միջև որևէ վիճաբանութ-

յուն չկա: Նա Ղովտին առաջարկեց առաջինն ընտրել: Եթե Ղովտը որոշեր ձախ գնալ, Աբրահամը աջ կգնար, իսկ եթե որոշեր աջ գնալ, Աբրահամը ձախ կգնար:

Ղովտը կատարեց իր ընտրությունը: Ղովտից այն տպավորությունը չենք ստանում, որ նա պատրաստ էր չհամաձայնել հորեղբոր ասածին: Ղովտն աչքերը բարձրացրեց ու Հորդանանի բոլոր կողմերը նայեց: Աբրահամը լքել էր Եգիպտոսը թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգևորապես, սակայն Ղովտի առաջնահերթություններն այլ էին: Նա Հորդանանի կողմը նայեց ու տեսավ, որ ամեն տեղ ջրաբքի էր ու հաճելի, Տիրոջ դրախտի կամ Եգիպտոսի երկրի պես էր:

Թե ինչ գիտեր Ղովտը Տիրոջ դրախտի մասին, կարելի է պարզապես ենթադրել, բայց նա անշուշտ գիտեր Եգիպտոսի և այդ երկրի բարեբեր տարածքի մասին: Սրտում նա դեռ այնտեղ էր, և սա այդպիսի տարածքում ապրելու ոսկե առիթ էր: Առանց իր հոգևոր բարօրության մասին մտածելու՝ Ղովտն ընտրեց Հորդանանի հովիտը և դեպի արևելք շվեց: Աբրահամն ու Ղովտը իրարից բաժանվեցին: Աբրահամը շարունակեց ապրել Քանանի երկրում, բայց Ղովտը դաշտի քաղաքներում բնակվեց: Ցավոք սրտի, նա ոչ միայն տեղափոխվեց Հորդանանի հովիտ, այլև շատ չանցած՝ իր վրանը բացեց Սողոմի մոտ: Այնտեղ նա հոգևորապես ընկնելու վտանգի առաջ էր: Շուտով տեսնում ենք, որ նա սկսեց ապրել քաղաքում:

Ծննդոց գրքի հեղինակը կարծես թե ուզում է ասել, թե Ղովտը շատ լավ գիտեր՝ ուր էր գնում: Սողոմի մարդիկ շատ չար ու մեղավոր էին Տիրոջ առջև: Պետրոսն ասում է, թե Ղովտն անօրենների անառակ վարքից ձանձրացել էր (Բ Պետ. 2:7): Եթե Ղովտն ուզում էր Տիրոջ համար լավ վկայություն պահպանել, ապա սխալ ճանապարհի վրա էր: Այս փուլում կատարած սխալ ընտրությունը հիմք հանդիսացավ ապագայի աղետի համար:

Այս բոլորից կարելի է մի քանի հարց առաջ քաշել: Ընտրություն կատարելու ժամանակ ի՞նչ սկզբունքների ենք հետևում: Որո՞նք են մեր կյանքի առաջնահերթությունները: Արդյոք գիտակցո՞ւմ ենք սըխալ ընտրության հետևանքները:

Ընտրության ժամանակ արդյոք միայն նյութակա՞ն առավելություններին ենք ուշադրություն դարձնում: Այսինքն՝ միայն ա՞յս կյանքի բաներն ենք փնտրում: Մենք պետք է գիտակցենք, որ կան նաև հավիտենական արժեքներ: Մենք այստեղ չենք ապրում ներկա նյութական առավելությունները վայելելու, այլ մեր Տիրոջը փառավորելու համար: Շատ կարևոր է Տիրոջ կամքը փնտրել, երբ երկու կամ ավելի այլընտրանքների առջև ենք կանգնած: Այդ ժամանակ պետք է ընտրենք այն ճանապարհը, որով կկարողանանք ծառայել Տիրոջը լավագույն կերպով:

Սա անկասկած նշանակում է, որ պետք է աղոթքով ժամանակ տրամադրենք՝ քննելու տարբերակները ու Տիրոջը խնդրելու, որ ցույց տա, թե ինչ ճանապարհով է ուզում, որ գնանք: Եվ Նա ցույց կտա: Միգուցե Նա այնպիսի հանգամանքներ կառաջացնի, որոնցով կհասկանանք Նրա ուզած ճանապարհը: Ակնկալում ենք, որ Աստված մեզ ներքին խաղաղություն կտա: Եվ երբ Աստծո ծրագիրը հայտնի լինի, մենք այդ ճանապարհով վստահությամբ կսկսենք ընթանալ:

Ըստ էության՝ Աբրահամն ընտրությունը Տիրոջը թողեց: Դովտից բաժանվելուց հետո Տերն Աբրահամին ասաց, որ աչքերը վեր բարձրացնի և իր տեղից դեպի հյուսիս, հարավ, արևելք ու արևմուտք նայի: Աստված ընդարձակեց այն խոստումը, որը տվել էր Աբրահամին՝ ասելով, թե իր տեսած այդ ամբողջ երկիրը իրեն և իր սերունդին է տալու հավիտյան: Աստված նաև ավելացրեց՝ ասելով, թե Աբրահամի սերունդը երկրի փոշու պես անթիվ է դարձնելու, այնպես որ եթե մեկը երկրի փոշին կարողանա հաշվել, նրա սերունդն էլ թող հաշվի: Այնուհետև Աբրահամին ասվեց, որ երկրով շրջի դրա երկարության ու լայնության համեմատ, քանի որ այն նրան էր տալու:

Այստեղ հիանալի միտք կա: Աբրահամը վերադարձավ այնտեղ, որտեղ միշտ պետք է գտնվեր, այսինքն՝ Տիրոջ ներկայության մեջ: Նա այժմ գիտեր, որ Աստված հոգ կտանի իր մասին, և Նրա որոշած ժամանակին այդ երկիրը կպատկանի իր ժառանգներին: Այս վստահությամբ նա իր վրանը վերցրեց ու գնաց բնակվելու Մամբրեի կաղնիների մեջ, որ Քեբբոնում էր, և այնտեղ սեղան շինեց Տիրոջը:

Դոն Սթորմըր

## «Գնացե՛ք... և ավետարանը քարոզեցե՛ք»

### Մաս 1

**Ո**չ որք քեզ չի կարող ասել, թե Աստված կոնկրետ ինչ է ուզում, որ անես, բայց Աստծո Խոսքը հստակ նկարագրում է, թե Աստված ինչ է ակնկալում ինձանից և քեզանից:

### Հիսուս Քրիստոսի վերջին Մեծ հանձնարարականը

Երբ Տեր Հիսուսը երկրի վրա էր, Նա մեզ մի պատվեր տվեց: Այն հայտնի է որպես Մեծ հանձնարարական, որը շատ կարևոր է, քանի որ դա երկրի վրա Տեր Հիսուսի վերջին խոսքերն են: Այս պատվերն իր մեջ մի քանի հարցերի պատասխան է պարունակում:

Ի՞նչ է Նա ուզում, որ անեն:

Այս հարցի պատասխանը գտնվում է Մարկոս 16:15-ում:

Եվ ասաց նրանց. «Գնացե՛ք ամբողջ աշխարհով մեկ և ավետարանը քարոզեցե՛ք բոլոր մարդկանց» (Մարկ. 16:15)

Մա է միսիոների մանդատը (կամ նրան տրված պատվերը):

Այս պատվերը տալիս է հետևյալ երեք հարցերի պատասխանները:

### ➤ Ի՞նչ պետք է ես անեմ:

Գու պետք է «գնաս» և «քարոզես Ավետարանը»: Քո ծառայությունը, ավետարանչությունը, քո միսիոներական աշխատանքը պետք է կենտրոնացած լինեն Աստծո Խոսքը քարոզելու վրա, հատկապես՝ Ավետարանը քարոզելու: Մենք կանչված ենք ավետարանելու:

«Ուրեմն հավատքը լսելուց է, և լսելը՝ Աստծո Խոսքից» (Հռոմ. 10:17):

Աստված խոստանում է օրհնել Իր Խոսքը. «Այդպես էլ պիտի լինի Իմ բերանից դուրս եկող խոսքը, այն դատարկ չի վերադառնալու Ինձ մոտ, այլ Իմ կամեցածը կկատարի և ինչի համար, որ ես ուղարկել եմ, դրանում կհաջողվի» (Ես. 55:11):

Ուստի քո պատասխանատվությունն է քարոզել Խոսքը: Աստված Ավետարանը քարոզելու միջոցով է փրկում մեղավորներին:

➤ **Որտե՞ղ պետք է դա անեն:**

Տեր Հիսուս Քրիստոսի հրամանն է՝ «ամբողջ աշխարհում»:

➤ **Ո՞ւմ պետք է ավետարանեն:**

Պատասխանը հետևյալն է՝ «բոլոր մարդկանց», որոնց մեջ են մտնում նաև երեխաները: Ոչ մեկը չի բացառվում: Գու կարիք ունես խնդրելու հունձքի Տիրոջը, որ ցույց տա քեզ, թե որտեղ պետք է ծառայես Նրան ում պետք է հասնես և ավետարանես այդ տարածքում:

Պետք է հիշես, որ Մարկ. 16:15-ում նշված «բոլոր մարդկանց» մեջ մտնում են նաև միլիոնավոր երեխաներ, որոնց պետք է ավետարանել, քանի որ նրանք նույնպես մտնում են այս ՄԵԾ հանձնարարականի մեջ: Քանի որ աշխարհի բնակչության մեկ երրորդը երեխաներն են, արդյոք տրամաբանական չէ՞ ակնկալել, որ ընդհանուր ավետարանչության ամբողջ ջանքերի մեկ երրորդը պետք է ուղղված լինի երեխաներին: Գուցե Տերը կառաջնորդի քեզ՝ ավետարանելու երեխաներին որպես այս մեծ միսիոներական մանդատի մի մաս, հնազանդվի՛ր Նրան:

Մանկանց ավետարանչության ընկերակցություն



## **Դրամատան հաշիվը**

**Պ**ատկերացրու, թե մի մրցույթում մրցանակ ես շահել: Եվ ամեն առավոտ քո բանկային հաշվին դրվելու է \$86,400: Սակայն այս մրցանակը օրենքներ ունի, ինչպես որևէ խաղի պարագայում:

1. Այդ օրը չձախսածդ գումարը քեզանից վերցվելու է:
2. Միայն դու կարող ես ծախսել այն, ուրիշ ոչ ոք:

3. Երբ ամեն առավոտ արթնանաս, բանկը քո հաշվին նոր \$86,400 պիտի դնի:
4. Բանկը կարող է այս խաղը դադարեցնել առանց նախազգուշացման:
5. Բանկը կարող է մեկ ակնթարթում ընդմիջտ փակել հաշիվդ:

Ի՞նչ կանես: Կգնես այն, ինչ կուզես, այնպես չէ՞: Ոչ միայն քեզ համար, այլև նրանց համար, ում չես ճանաչում, քանի որ անհնար է այդ բոլորը ծախսել անձիդ կամ ծանոթներիդ համար, այնպես չէ՞: Կփորձես մինչև վերջին լուման ծախսել և գործածել ամեն օր, չէ՞:

Այս խաղը իրականություն է, բայց ոչ դրամով: Յուրաքանչյուրս այսպիսի երևակայական դրամատան սեփականատեր եմք, բայց կարծես չենք տեսնում այն: Այս մոգական դրամատունը ժամանակն է:

Երբ ամեն առավոտ արթնանում եմք, ստանում եմք 86,400 վայրկյան՝ որպես կյանքի նվեր, և երբ օրը վերջանում է, ինչ ժամանակ որ մնացել է, կորած է և անկարելի է մեր հաշվին պահել: Այն, ինչ այդ օրը չկարողացանք օգտագործել, հավիտենապես կորած է: Երեկվա օրը բոլորովին անհետացած է: Յուրաքանչյուր առավոտ հաշիվդ լրջվում է, բայց այս երևակայական դրամատունը կարող է այն փակել որևէ ժամանակ և առանց նախազգուշացման:

Ուստի ի՞նչ ես անելու քո 86,400 վայրկյանով, որ Հայր Աստված ամեն օր շնորհում է քեզ որպես նվեր: Մտածի՛ր այդ մասին և վայելի՛ր կյանքիդ ամեն րոպեն, քանի որ ժամանակը քո կարծածից շատ ավելի արագ է վազում: Քո մասին հո՛գ տար և Աստծո տված կյանքդ վայելի՛ր՝ Նրան հնազանդվելով: Յուրաքանչյուր օրն ամբողջությամբ ապրի՛ր: Ուրիշների հետ քաղցր եղի՛ր և ների՛ր (Եփես. 4:32): Դուրան դիրքավորո՛ւմ ունեցի՛ր և միշտ առաջի՛նը եղի՛ր ժպտալու մեջ:

«Ուստի նայեցե՛ք, որ զգուշությամբ քայլեք, ոչ թե անմիտների նրման, այլ՝ իմաստունների, ժամանակը ծախսու՛ առեք, որովհետև օրերը չար են» (Եփես. 5:15-16):

ՌիթԱրամ Դավիթյան  
Քաղված «Բարեպառուղ ձիթենին» գրքից

## Կործանված՝ թղթախաղի պատճառով

Երեկոյան երեք երիտասարդ աղջիկ նստել էին սեղանի շուրջ: Նրանցից մեկը մի տրցակ թղթախաղի քարտեր ուներ: Նրա կողքը երիտասարդ էր կանգնած, որ այդ տան ընտանիքի անդամներից մեկն էր: Նա մաքուր նկարագրի տեր երիտասարդ էր: Աղջիկները տարբեր առիթներով հավաքվում էին այդ տանը՝ մինչև կեսգիշեր թղթախաղով զբաղվելու համար: Ամեն անգամ աղջիկներից մեկն առաջարկում էր երիտասարդին, որ իրենց միանա, բայց նա քաղաքավարի կերպով մերժում էր: Այն աղջիկը, որը կարողանար համոզել այս երիտասարդին, հատուկ մրցանակի էր արժանանալու՝ դրժվար գործը գլուխ բերելու համար: Մինչև այդ երեկո որևէ մեկը հաջողության չէր հասել: Երիտասարդն ասում էր, որ ոչ ոք չի կարող իրեն համոզել: Նա գիտակցում էր, որ թղթախաղը կարող էր բախտախաղի վերածվել ու իր կործանման պատճառը դառնալ:

Այդ աղջիկներից մեկն ուզեց փորձել: Նա բացառիկ գեղեցկությամբ օժտված գրավիչ աղջիկ էր: Դառնալով երիտասարդին՝ ասաց.

- Այս խաղը չորս հոգով են խաղում, մենք երեքն ենք, չե՞ս ուզում մեզ միանալ, որ շրջանակն ամբողջանա»:

Երբ տեսավ, որ երիտասարդը նպատակ չունի միանալու, շարունակեց.

- Միայն այսօր խաղա:

Պարզ խոսակություն չէր: Ամեն բան գործադրում էր՝ հարձակումն առավելագույն չափով ազդեցիկ դարձնելու: Մի պահ վարանելուց հետո երիտասարդը համաձայնեց: Ամբողջ, որ դիմադրել էր մինչև այն օրվա հարձակումներին, անսպասելիորեն հանձնվեց: Որոշ ժամանակ ամեն բան լավ էր ընթանում, բայց երիտասարդի վախը գրյուխ բարձրացրեց: Նա սկսեց դրամի համար խաղալ: Պատահում էր, որ մինչև առավոտ նստում էր սեղանի շուրջ: Ժամանակ անց հիվանդացավ վեներական հիվանդությամբ: Մի քանի անգամ որոշեց բոլոր մոլություններից հրաժարվել և հին օրերին վերադառնալ, բայց

չկարողացավ: Մի հիվանդությունը մյուսին առաջնորդեց: Դրացի մի հովիվ այցելեց նրան, ու երիտասարդը հետևյալ խոստովանությունն արեց. «Եղածից տարբեր մի անձնավորություն կարող էի լինել, բայց շատ ուշ է: Համոզված եմ, որ գերեզմանից այն կողմ ուրիշ աշխարհ կա, ու երբ մտածում եմ, որ իմ մեղսալի կյանքի համար արդար հատուցում եմ ստանալու, աննկարագրելի սուսկում եմ զգում»: Մրանք վերջին խոսքերն էին: Նա գերեզման իջավ 35 տարեկան հասակում: Երիտասարդ, զգուշացիր:

Քաղված՝ «Օրհնաբեր նունենին» գրքից

## Սաղմոս 36:1-9

1. Ամբարշտի անօրենությունն իմ սրտին ասում է. «Աստծո վախը չկա նրա աչքերի առջև»: 2. Քանի որ ինքն իրեն է չողորթրթում իր խակ աչքում՝ մինչև իր հանցանքի ատելի լինելն ի հայտ գա: 3. Նրա բերանի խոսքերը հանցանք են ու խաբեություն, դադարել է իմաստուն լինելուց ու բարիք գործելուց: 4. Իր անկողնում խառնակություն է ծրագրում ու կանգնում է այնպիսի մի ճանապարհի վրա, որ լավ չէ. նա չարից չի զզվում: 5. Քո ողորմությունը, ո՛վ ՏԵՐ, երկինքներում է, Քո հավատարմությունը մինչև ամպերն է հասնում: 6. Քո արդարությունը մեծ լեռների պես է, դատաստաններդ՝ խոր անդունդի. մարդկանց ու անասուններին Դու ես պահպանում, ո՛վ ՏԵՐ: 7. Ի՞նչ գերազանց է Քո գթասիրությունը, ո՛վ Աստված. դրա համար մարդկանց որդիները Քո թևերի հովանուն են ապավինում: 8. Նրանք առատորեն հագենալու են Քո Տան լիությունից. Քո բարեհաճությունների գետից ես խմեցնելու նրանց: 9. Քանի որ կյանքի աղբյուրը Քո մոտ է. Քո լույսով ենք լույս տեսնելու: 10. Շարունակի՛ր Քո գթությունը Քեզ ճանաչողների հանդեպ ու Քո արդարությունը՝ սրտով ուղիղների վրա: 11. Ամբարտավանի ոտքը թող չգա՛ ինձ վրա, ու չարերի ձեռքն ինձ չտատանի: 12. Այնտեղ ընկան անօրենություն գործողները. գետնին տապալվեցին ու չեն կարողանալու վեր բարձրանալ:

## **Եկեղեցու պատմությունը (2)**

**մ.թ. 100-1517 թթ.**

330թ.-ին Կոստանդիանոս Մեծը որոշեց կայսրության նոր մայրաքաղաք հիմնել Բյուզանդիոնում, որը վերանվանվեց Կոստանդնուպոլիս (Ստամբուլ՝ 1930 թվականից): Կոստանդիանոսը մահացավ 337թ.-ին, սակայն նա արդյունավետ կերպով բաժանեց Հռոմեական կայսրությունը Արևելքի և Արևմուտքի միջև, որոնցից զարգացավ Բյուզանդական արևելյան կամ հունական ուղղափառ եկեղեցին և Հռոմեական արևմտյան լատինական կաթոլիկ եկեղեցին: Մինչև 4-րդ դարի վերջը բաժանումը մշտական էր:

Մինչ Արևելքն օգտագործում էր հունարենը, Արևմուտքը պահպանեց լատիներենը, որը տարածված լեզու էր: Հիերոնիմոսը (345-420 թթ.)՝ Արևմուտքի աստվածաշնչագետերից մեկը, 405թ.-ին ամբողջացրեց սուրբգրությունների լատինական Վուլգատ թարգմանությունը:

Փամանակակից առաջնորդներից էին Միլանի եպիսկոպոս Ամբրոսիոս Մեդիոլանցին (374-397թթ.), Հիպոնի եպիսկոպոս Օգոստինոսը (396-430թթ.) և Հռոմի պապ Գրիգոր 1-ը (540-604 թթ.): Ճիշտ է, որ նրանք օգնեցին «եկեղեցին» կազմավորելու մեջ, սակայն հստակ է, որ մարդկանց հեռու տարան սուրբգրությունների ճշմարտությունից՝ ձևավորելով կղերականությունը, ծիսակարգերի պաշտամունքը, իսկ հաղորդության արարողությունը վերածեցին փրկության միջոցի: Սրանց մասին ավելի շատ կխոսենք առաջիկա դասերին:

Պետք է նշել, որ պապականության հայեցակարգը և առաքելական հաջորդականությունը Հռոմեական կաթոլիկ եկեղեցու ավանդույթներ են: Նոր Կտակարանում որևէ տեղ (որն ընդգրկում է եկեղեցու պատմության առաջին 70 տարիները) չենք կարողում պապերի կամ առաքելական հաջորդականության մասին: Պետրոս առաքյալը երբեք ինքն իրեն Հռոմի առաջին եպիսկոպոս կամ պապ չի հայտարարել: Եկեղեցու առաջին խորհուրդը նախագահում էր Հակոբոս առաքյալը (Գործք 15:1-29): Մի առիթով Պողոսը հանդիմանեց Պետրոս առաքյալին (Գաղ. 2:11-14)՝ ցույց տալով, որ Պետրոսը չի զբա-

ղեցնում առաքյալների մեջ իշխանության գլխավոր դիրք: Նահատակվելուց կարճ ժամանակ առաջ Պետրոսն ինքն իրեն երեց կոչեց (Ա Պետ. 5:1): Եվ երբ Պողոս առաքյալը գրեց հռոմեացիներին, Պետրոսի մասին ընդհանրապես ոչինչ չասաց: Իրականում հստակ չգիտենք, թե արդյոք Պետրոսը երբևէ եղե՞լ է Հռոմում, թե՞ ոչ:

Հաջորդող տարիների ընթացքում ավելի շատ հերետիկոսություններ ի հայտ եկան, և նոր խնդիրները լուծելու համար մեծացավ եպիսկոպոսների խորհուրդներ կազմելու և վեհաժողովներ գումարելու հաճախականությունը: Այս հերետիկոսություններից մի քանիսը միտված էին քրիստոնեական հավատքի հիմքերը կործանելու դեմ, ինչը կարելի է ենթադրել 451թ.-ին հրավիրված Քաղկեդոնի 4-րդ տիեզերական ժողովի ելույթից:

Նաև հաշվի պետք է առնել, որ սա այն ժամանակաշրջանն էր, երբ Հռոմեական կայսրությունը քայքայվեց ու քանդվեց: 410թ.-ին Ալարիկ I-ի առաջնորդությամբ Գոթի բարբարոսները ներխուժեցին Հռոմ և մեծ արժողություն ունեցող շարժական իրեր գողացան՝ վագոններով տանելով իրենց երկիր: Չարմանալի էր, բայց Ալարիկը հրամայել էր իր զինվորներին չսպանել ժողովրդին և չդիպչել քրիստոնեական եկեղեցիներին: Վերջապես 455թ.-ին Հյուսիսային Աֆրիկայի Վանդալ կայսրի հրամանով Գիեզերիսի գլխավորությամբ հսկա նավատորմն արշավեց Հռոմ: Այս անգամ գրեթե ամեն ինչ կողոպտվեց, նույնիսկ թանկարժեք իրերը, որոնք նախկինում Տիտոսը գողացել էր Երուսաղեմի տաճարից: Նրանք իրենց հետ տարան նաև 30,000 բնակիչ՝ որպես ստրուկ: Այնուհետև 476թ.-ին Իտալիան ընկավ Արևելքի կայսրության հսկողության տակ ու դարձավ Արևելքի գավառներից մեկը:

Այս իրադարձություններն առիթ հանդիսացան՝ խթանելու այսպես կոչված «մութ դարերը»: Արևմուտքի Հռոմեական կայսրության անկման կարևոր հետևանքներից մեկը պապականության զարգացումն էր: Արևմուտքում այլևս կայսր չունենալով՝ պապերը ոչ միայն եկեղեցական կայսրություն կառուցեցին, այլև ստանձնեցին քաղաքացիական իշխանության որոշ գործառույթներ:

#### 4. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԻՋԻՆ ԳԱՐԵՐ (590-1375թթ.)

Թեև այժմ մտնում ենք եկեղեցու պատմության մութ դարաշրջանի էջեր, սակայն դրանցում կհաջողվի որոշ պայծառ էջեր գտնել: Հռոմի պապ Գրիգոր Մեծը (596-604 թթ.) հստակ արտահայտեց հեռավոր երկրներն ավետարանելու իր փափագը: Իր երիտասարդության տարիներին վանական լինելով՝ նա վանականությունը բերում է պապականության մեջ: Գրիգորը 596-թ.-ին Օգոստինոսի (ոչ սուրբ Օգոստինոսի) գլխավորությամբ Բենեդիկտյան վանականների մի խումբ ուղարկեց Անգլիա: Այնտեղ նրանց այնքան լավ ընդունեցին, որ նրանց հատկացրին Քենթերբերիի շրջանը՝ սեփական վանահամալիր ունենալու համար: Գրիգորն Օգոստինոսին նշանակեց Քենթերբերիի 1-ին արքեպիսկոպոս:

Գրեթե այդ ժամանակներում ծնվեց իսլամը: Մեքքայից Մուհամմադը (570-632թթ.) պնդեց, որ Գաբրիել հրեշտակի կողմից տեսիլք է ունեցել, և նրան պատվիրվել է այդ պատգամն իր ժողովրդին փոխանցել: Նրա պատգամն այսպես սկսվեց. «Միայն մեկ Աստված կա, և Մուհամմադը Նրա մարգարեն է»: Մի քանի տարվա ընթացքում Մուհամմադն արաբների մեջ բազմաթիվ հետևորդներ ունեցավ և դարձավ ոչ միայն նրանց մարգարեն, այլև օրենսդիրը, դատավորն ու թագավորը: Իսլամն արագորեն տարածվեց Մերձավոր Արևելքում, Կենտրոնական Ասիայում և Հյուսիսային Աֆրիկայում:

707թ.-ին Հյուսիսային Աֆրիկայի եկեղեցին դիրքերը կորցրեց իսլամի դեմ: Զրիստոնեության երբեմնի ամրոցները՝ Երուսաղեմը, Անտիոքը և Ալեքսանդրիան, նույնպես ընկան: Այդ տարիներին դեռևս միայն Հռոմն ու Կոստանդնուպոլիսը կարողացան դիմակայել:

Մուհամմադի մահից անմիջապես հետո ասվում է, թե մի խումբ կրոնական մարդիկ հավաքել են նրա բանավոր խոսքերը, որոնք ասել էր իր կյանքի ընթացքում, և գրի են առել դրանք մի գրքում, որն այժմ հայտնի է Գուրան անունով: Այս գիրքն ընդգծում է չորս բան՝ աղոթք, բարեգործություն, Ռամադանի ծոմապահություն և դեպի Մեքքա ուխտագնացություն: Հավատարիմներին խոստացվում է ամեն տեսակի մարմնական հաճույքներով լի երկնային կյանք, իսկ անհավատներին սպառնում են դժոխքի տանջանքները:

Այսպիսով, իսլամը գործերի վրա հիմնված կրոն է՝ ի տարբերություն քրիստոնեության, որը շնորհքի վրա է հիմնված: Ընթերցողը միանգամից կհասկանա, որ այս կրոնը հակասում է Աստվածաշնչի ուսմունքներին, քանի որ Աստվածաշունչը հստակորեն հերքում է աստվածային հետագա որևէ հայտնություն՝ բացի Հիսուս Քրիստոսի առաքյալներին տրվածից: Նոր Կտակարանի վերջին գրքում կարդում ենք. «Քանի որ Ես վկայում եմ ամեն մարդու, որ լսում է այս գրքի մարգարեության խոսքերը: Եթե մեկը սրանց վրա որևէ բան ավելացնի, Աստված էլ նրա վրա ավելացնելու է այն պատուհասները, որոնց մասին գրված է այս գրքում: Եվ եթե մեկն այս մարգարեության գրքի խոսքերից մի բան պակասեցնի, Աստված էլ պակասեցնելու է նրա բաժինը Կենաց գրքից, սուրբ քաղաքից և այն բաներից, որոնց մասին այս գրքում գրված է» (Հայտ. 22:18-19):

Իսլամի տարածումը կատարվել է հիմնականում ռազմական ուժի միջոցով և ի հակադրություն Սուրբ Գրքի ուսմունքին (տե՛ս Եփես. 6:12, Հռոմ. 12:17-19, Մատթ. 5:38-42, Ա Պետ. 3:9)՝ այդ ժամանակվա քրիստոնեական եկեղեցին մեծ ջանքեր և գումար է ծախսել՝ իսլամի դեմ պատերազմ հայտարարելով: Արդյունքում՝ քրիստոնյաներից շատերը հիասթափվեցին եկեղեցուց և դարձան վանականներ ու ճգնավորներ: Ոմանք կարծում էին, թե Աստված վանականներին ու ճգնավորներին բարեհաճորեն կվերաբերվի՝ իրենց մարմինները չարչարելու և գրկանքների ենթարկելու համար:

Այնուամենայնիվ, եղան որոշ մարդիկ, որոնք որոշ չափով դուրս եկան եկեղեցական իշխանության ազդեցությունից և Ավետարանը հասցրին հեռավոր երկրներ: Նրանցից մեկն անգլիացի Բոնիֆասն էր (680-754թթ.): Պատանի տարիքից նա ուզում էր քրիստոնյա միսիոներ լինել: Փափազը ծագել էր իր հոր տանը մնացող մի քանի վանականների շնորհիվ: 30 տարեկանում նա ուղարկվեց Ֆրիզլանդիա (Հոլանդիա)՝ ծառայելու, այնուհետև՝ Հեսսեն (Գերմանիա) և Բավարիա: Նրա աշխատանքը հատկապես բեղմնավոր էր Գերմանիայում, որտեղ քրիստոնեական եկեղեցի էր կազմավորվել: Ի վերջո, նա այնտեղ եպիսկոպոս օծվեց: Իր ծերության ժամանակ նա վերադարձավ Հոլանդիա, որտեղ աշխատեց որոշ ժամանակ, բայց բախվեց հեթանոս մարտիկների հարձակմանը ու սպանվեց:

## «Որովհետև ես՝ Տերս, չեմ փոփոխվի»

### Մադաթիա 3:6

#### Փոփոխվող աշխարհ

Նախորդ հարյուրամյակների ընթացքում բազում փոփոխություններ են տեղի ունեցել: Փոփոխությունն այնքան սրընթաց է, որ հազիվ հասցնում ենք աչք թարթել, և փոփոխության հերթական ալիքն է հարվածում մեզ: Ամեն օր՝ քսանչորս ժամ, մարդիկ շարունակ գալիս ու գնում են: Փոփոխությունը մեր կյանքի մշտական ուղեկիցն է:

Գիտե՞ք, որ ԱՄՆ-ում ամեն օր՝

- 108,000 մարդ նոր տուն է տեղափոխվում:
- 18,000 մարդ տեղափոխվում է ուրիշ նահանգ:
- 40 ամերիկացի թևակոխում է կյանքի 100 տարին:
- 5,800-ը՝ 65 տարին:
- ավելի քան 6,300 մարդ ամուսնալուծվում է:
- Իսկ 13,000-ը՝ ամուսնանում:

Վերջին 30 տարիների ընթացքում ավելի շատ ինֆորմացիա է առաջացել, քան նախորդ 5,000 տարիների ընթացքում: Այսօր խանութի ապրանքատեսականու 90%-ը գոյություն չունեք տասը տարի առաջ: Հաշվվում է, որ քոլեջի շրջանավարտների 50%-ը ընդունվում է այնպիսի աշխատանքների, որոնք գոյություն չունեին նրանց ծնվելու ժամանակներում:

#### Մի մարդ այսպես է ձևակերպել.

«Մեծ պապս ձի էր քշում, բայց վախենում էր գնացքից: Պապս գնացքով էր երթնելում, բայց վախենում էր մեքենայից: Հայրս մեքենա էր վարում, բայց վախենում էր ինքնաթիռից: Ես ինքնաթիռ եմ նստում, բայց վախենում եմ ձիուց»:

Փոխհարաբերությունները փոխվում են: Ամուսնությունների 50%-ը այսօր ավարտվում է ամուսնալուծությամբ: Եվ հավանականություն

կա, որ երբ գույգը ոտք է դնում ամուսնական շեմին, նրանց ընտանիքը յոթ տարուց ավել չի տևի: Մեր երիտասարդների 42% ասում է, որ սեռական կյանքով է ապրում, իսկ դեռահաս աղջիկներից յուրաքանչյուր 16-ն ամեն տարի երեխա է ունենում: Մեր հասարակությունը հեռացել է փոխհարաբերությունների Աստծո օրենքից:

### **Մեր անփոփոխ Աստված**

Պետք է հիշենք, որ Աստված դեռ վերահսկում է և երբեք չի փոխվում: Նա երբեք չի շեղվում դեպքերի ընթացքից, երբեք չի շփոթվում, միշտ ճիշտ որոշում է կայացնում: Նա միշտ գիտի, թե ինչ է անելու, նույնիսկ մինչև հանգամանքների ծագելը: Աշխարհի սանձերն Աստծո ձեռքերում են, և Նրա նպատակները կիրագործվեն:

Աստվածաշունչը խոսում է այս հարափոփոխ աշխարհում մեր անփոփոխ Աստծո մասին. «Որովհետև Ես Տերս, չեմ փոփոխվի» (Մատթիա 3:6):

Մաղաքիային այս խոսքերն ասվեցին մեծ փոփոխության ժամանակաշրջանում. պաշտամունքը դարձել էր մակերեսային, քանզի մարդիկ իրենց «մնացորդներն» էին տալիս Աստծուն:

Աստծո բարոյական օրենքն անտեսվում էր, հատկապես ամուսնության հարցում:

### **Ամուսնալուծությունն ազգային պատուհաս էր:**

Տասանորդ վճարելու Աստծո պատվիրանն անարգվում էր՝ ի տրնտեսական անբարենպաստություն ազգի: Ո՛չ քահանաները, ո՛չ մարդիկ լուրջ չէին ընդունում ահագնացող դատաստանը: Այդպիսի աշխարհում Աստված հիշեցնում ու զգուշացնում էր Իր ժողովրդին, որ Ինքը չի փոխվել:

### **Մենք պետք է նորոգենք մեր տեսիլքը:**

Մենք պետք է խանդավառ ու հստակ տեսիլք ունենանք այն մասին, որ Աստված մեզ կանչել է անելու և ինչպիսին պետք է լինենք: Ինչ-որ մեկն ասել է. «Եթե մեր հուշերն ավելի շատ են քան, երազանքները, կյանքն ավարտվել է»: Մենք պետք է իմանանք, թե ուր ենք գնում և ինչ ենք անելու:

Եթե ուզում եմ տխրել, ապա ընդամենը պետք է ինքս իմ մեջ նայեմ: Եթե ուզում եմ հաղթվել, ընդամենը պետք է ետ նայեմ: Եթե ուզում եմ շեղվել, ընդամենը պետք է շուրջս նայեմ: Եթե ուզում եմ տագնապել, ընդամենը պետք է առաջ նայեմ: Եթե ուզում եմ փրկվել, ինձ պետք է վեր նայել: Միայն այն ժամանակ, երբ ուշադրությունս հանեմ Տիրոջը, արգելքները կվերածվեն հնարավորությունների, իսկ պատմեշները՝ օրհնությունների:

### **Դասեր, որ կարող ենք քաղել Մովսեսից.**

«Հավատով նա Եգիպտոսը թողեց, չվախենալով թագավորի բարկությունից, Անտեսանելուն տեսնողի պես համբերեց» (Եբր. 11:27): Մովսեսի աչքերն Աստծուն էին նայում, և նա համբերեց: Մովսեսն աննկուն ուժ ուներ՝ հակառակ բոլոր փոփոխությունների: Նա հայացքն Աստծուն էր դարձրել, ոչ թե խոչընդոտներին: Նա համբերում էր՝ չնայած Փարավոնի անարգանքին: Նա տանում էր եբրայեցիների համառությունը, որոնք տրտմջում էին, գանգատվում ու ընդվզում նրա դեմ: Նա դիմանում էր իր սիրելիների՝ Մարիամի՝ քրոջ, Ահարոնի՝ եղբոր, և ընկերների՝ Դաթանի ու Աբիրոնի քննադատություններին: Նա կարողանում էր դա անել, որովհետև հայացքն ուղղել էր Տիրոջը և երբեք ետ չէր նայում:

### **Մենք ևս կարող ենք փոխել աշխարհը:**

Երբ թվում է, թե հակառակորդը բարգավաճում է, երբ չարը կարծես հաղթանակում է, երբ ճնշումը ահագնանում է, երբ քննադատներն ավելի ու ավելի ակտիվանում են, երբ զգում ենք, որ մեն-մենակ ենք, երբ սխալը թագավորում է, իսկ ճշմարտությունը գոյամարտ մղողում... ինչի էլ բախվենք, մեզ հարկավոր է նայել Տեր Հիսուսին: Փոփոխությունը Նրա հետ է գալիս:

Աստված դեռևս օգտագործում է Իրեն լիովին նվիրված սովորական մարդկանց անկայուն աշխարհում փոփոխություն մտցնելու համար:

Դոկտ. Չեսլով Բասսարա  
(czeslaw7@eta.pl, www.proword.eu)

## Հավերժացրե՛ք պահը

«Հավերժացրե՛ք պահը»: Գունավոր լուսանկարների տպագրության զովագրները շատ տեղին են: Բոլորս մեր կյանքում ունենք այնպիսի պահեր, որոնք ուզում ենք լուսանկարել ու հավերժ պահել: Դրանք կարող են տարբեր տեսակի առիթներ լինել՝ սկսած ծովափին ընտանեկան հանգստից մինչև հոգևոր կյանքի հիշարժան մի փորձառություն: Անկախ այն բանից, թե մեր հիշողությունները ժայպվենի վրա ենք պահում կամ մեր սրտում, նպատակը նույնն է: Մենք պարզապէս ինչ-որ կերպով ուզում ենք պահել փորձառությունը, որպեսզի ավելի ուշ կարողանանք վերհիշել այն և վայելել դրա պատճառած ուրախությունը:

Այնուամենայնիվ, սկսում ենք բախվել բազմաթիվ խնդիրների, երբ շփոթում ենք անցյալը հիշելու և անցյալով ապրելու միջև եղած տարբերությունը: Երբ Իսրայելի ժողովուրդը մոռանում էր անցյալում Աստծո ցուցաբերած հավատարմությունը, մարգարեները հաճախ հիշեցնում էին նրանց տրված հոգևոր կանոնները, որոնցով պետք է ապրեին: Նրանք հասկացան, որ անցյալից կառչելը և անցյալի օրհնություններով ապրելն իրենց երբեք չի օգնել հասնելու իրենց փրկարածին: Այսօր մեզանից շատերի համար սա կարևոր դաս է, որը պետք է հիշել:

Ես անշուշտ չկարողացա հաշվել այն քննարկումների քանակը, որոնց անձամբ մասնակցել եմ կամ էլ պարզապէս լսել եմ, թե որքան լավ կամ վատ էր եկեղեցական այս կամ այն ժողովը: Պետք է խոստովանենք, որ առավոտյան պաշտամունքի հաջողությունը կամ ձախողումը կիրակի կեսօրվա ճաշի քննարկման նյութ է հանդիսանում շատերիս համար: Հետաքրքրական է, թե ինչպէս են այս գրույցները դուռ բացում ժողովների ձևաչափը վերանայելու կամ նմանատիպ այլ հարցերի շուրջ մտածելու համար: Միգուցե կարծում ենք, թե բանաձև կա, որը գտնելու դեպքում ինչ-որ կերպ կկարողանանք ապահովել անցյալի ծառայությունների կամ փորձառությունների օրհնությունը մեր եկեղեցիներում:

Մեր անճանական կյանքում նույնպես նույն պայքարին ենք հանդիպում: Տեսնում ենք ամենօրյա հոգևոր խորհրդածությունների նոր գիրք ու կարծում ենք, որ եթե այն կարդանք, ապա մեր հոգևոր կյանքը զարթոնք կվերապրի: Սակայն շատ չանցած՝ հայտնաբերում ենք, որ այդպես չէ. մենք նույն դատարկության ու ձանձրության մեջ ենք, որից փախչում էինք: Թվում է, թե բանաձևը կամ հմտությունը գտնելու ջանքերն ապարդյուն են, որոնցով կարող էինք վերակենդանացնել վաղեմի փորձառություններն ու օրհնությունները:

Մինչ երբայեցիները Մովսեսի առաջնորդությամբ անապատի միջով Ավետյաց երկիր էին գնում, Աստված ամեն օր հրաշքով կերակրում էր նրանց (Ելից 16.14-20): Մեկ օրում հավաքած կերակուրը չպետք է պահվեր մյուս օրվա համար: Ովքեր փորձեցին մանանան հաջորդ օրվա համար պահել, տեսան, որ առավոտյան այն որդնել էր: Անկախ այն բանից, թե ինչպիսի բանաձևի կամ միջոցի են դիմել, նրանք չկարողացան ապրել երեկվա կերակուրով: Նրանք կարող էին հիշել Աստծո օրհնությունն ու նախախնամությունը, սակայն չէին կարող դիմել այդ փորձառությանը և դրանով ապրել: Տեսնո՞ւմ եք՝ օրհնությունը բանաձևի մեջ չէ: Իրականում՝ օրհնություն փնտրելը մեզ միշտ հասցնում է հիասթափության: Աստված է օրհնությունը: Աստված անցյալով չի ապրում: Նրա անունը «Ես եմ» է: Նկատեցի՞ք ներկա ժամանակաձևը: Հետևաբար մենք չենք կարող Նրան հանդիպել անցյալում, քանի որ Նա այնտեղ չէ: Մեզ համար Նա միշտ ներկա է:

Մի առիթով Ս. Լուիսն ասել է, որ Աստված այնքան յուրահատուկ է, որ երբեք Ինքն Իրեն չի կրկնում: Աստվածաբանները սիրում են վիճաբանել այս նյութի շուրջ:

Աստված մեզ կոչ է անում երախտապարտ սրտով հիշել անցյալի Իր հավատարմությունները: Այնուամենայնիվ, անցյալում ապրելու փոխարեն մենք պետք է առաջ շարժվենք և ձգտենք փնտրել ոչ միայն անցյալի օրհնության հիշողությունները, այլև կենդանի Աստծուն: Երբ եկեղեցական պաշտամունքի ենք մասնակցում կամ անձնական մենիկ պահ ենք ունենում, առօրյա կյանքում որևէ իրավիճակի ենք բախվում, չպետք է փորձենք վերաապրել անցյալի օրհնությունները: Մենք ոչ թե օրհնությունն ենք փնտրում, այլ Աստծուն:

Ինչպես եբրայեցիներն անապատում, մեզանից հավատք է պահանջվում երեկվա օրհնությունները բաց թողնելու և ամեն օր դատարկ ամանով Աստծուն մոտենալու համար: Կենդանի Աստված ներկա է. Նա է այն ամենը, ինչի կարիքն ունենք: Սա է այն հավատքը, որն իսկապես հիշարժան է:

Աստված անցյալում չէ: Նա հավիտենապես ապրում է ներկայում, և այս ներկա պահին է, որ հանդիպում ենք Նրան ու շարունակում ապրել Իր ներկայության մեջ:

Ռեքս Տիրլավ

## **Ներման բերկրանքը**

### **Սաղմոս 32**

**Բ**ավիթ թագավորի կյանքը հաջողության և փառքի կյանք էր, քանի դեռ նա չէր դարձել անհոգ ու ծուլ, տեղի չէր տվել գայթակորությանն ու չէր ընկել անառակության և մարդասպանության մեղքերի մեջ: Նա նույնիսկ մեկ տարի համբերությամբ թաքցրել էր եղելությունը:

Այնուհետև Աստված Նաբան մարգարեի միջոցով խոսել էր Գավթի հետ, ու նա խոստովանել էր իր մեղքը: Գավթիքը 32-րդ սաղմոսն սկսում է՝ ընդունելով Աստծո ներումը, հետո տեսնում ենք, թե ինչ երեք փուլերով է նա անցնում:

### **ՉԽՈՍՏՈՎԱՆԱԾ ՄԵՂՔԻ ՊԱՏՃԱՌԱԾ ՑԱՎԸ**

Ի՞նչ եղավ Գավթին, երբ նա չէր ընդունում ու չէր խոստովանում իր մեղքերը: Նա հոգևոր ու ֆիզիկական տառապանքներ կրեց և ծեր մարդու նման ուժասպառ եղավ:

Նմանօրինակ ախտանշաններ (մտահոգություն, մտավոր հոգնածություն և այլն) ունեցող մարդիկ բժշկի են դիմում, մինչդեռ նրանց խնդիրը չխոստովանված մեղքն է: Այդպիսի ցավը բուժող միակ բժիշկը Աստված է:

## ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՂԵՐՍԱՆՔՈՎ

Դավիթը վերջապես խոստովանեց, որ մեղք է գործել: Նրա աղոթքը ոչ թե ընդհանուր խոստովանություն էր, այլ նա իր մեղքը կոնկրետ անվանեց, իսկ Աստված, ով հավատարիմ է իր խոստմանը, ներեց նրան:

«Ո՞վ է, Աստված, քեզ նման անօրինություն վեր առնող և իր ժառանգության մնացորդի մեղքից անց կենող, որ չի պահում իր բարկությունը հավիտյան, որովհետև նա ողորմություն սիրող է» (Միք. 7:18):

«Ապա թե մեր մեղքերը խոստովանենք, նա հավատարիմ է և արդար, որ մեր մեղքերը ների և սրբի մեզ ամեն անիրավությունից: Եթե ասենք, թե մեղք չգործեցինք, ստախոս ենք անում նրան, և նրա խոսքը մեր մեջ չէ» (Ա Հովհ. 1:9-10):

## ՆԵՐՍԱՆ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆԸ

Դավթի հառաչանքը երգի վերածվեց. նա սկսեց ուրախ երգեր երգել. անդադար երգելու կարիք էր զգում: Մի ժամանակ որ կողմ շրջվում էր, իր մեղքերն էր տեսնում: Դավիթն այլևս չէր վախենում, որովհետև Աստված էր նրան սատարում: Հիշե՛ք, որ ներված ու մաքրված լինելը կատարելություն և անփոթորիկ նավարկություն չի երաշխավորում: Սատանան անդուլ կերպով փորձում է կործանել հավատացյալի կյանքն ու նրանից խլել խաղաղությունն ու վստահությունը. հավատացյալն սկսում է անհանգստանալ իր անցյալի մեղքերից ու դրանց հետևանքներից:

Հնազանդությունն ունի դառը պտուղներ, ինչպես համոզվեց Դավիթը, սակայն 10-րդ և 11-րդ համարները մեզ հավաստիացնում են, որ Աստված պաշտպանում և պահպանում է նրանց, ովքեր իրեն են պատկանում: Անիրավ մարդիկ շատ տառապանք ունեն, իսկ մաքրված ու ներված հավատացյալը վայելում է Աստծո սիրառատ քաղցրությունն ու ողորմությունը:

Վեր.՝ Հովսեփ Հովսեփյան  
Քաղված «Աստծո արիեստանցը» գրքից

## Փոխարինված խաչը

«Շատ դյուրին է մեր հակառակորդներին արհամարհելը և առանց քացառության բոլորին դատապարտելը: Երբ փորձվում են այդպես անել, - ասում է վետերան ծովակալը, - հիշում են երկար տարիներ առաջ Հյուսիսային Վիետնամում պատերազմական բանտարկության ժամանակ պատահած անմոռանալի մի դեպք»:

Բանտում դրացի բանտարկյալների հետ հաղորդակցվելու միակ միջոցն իրար հետ ծածկագրով խոսելն էր: Այդ խոսակցությունները միշտ վերջանում էին՝ Ա.Օ.Բ. (Աստված օրհնի քեզ) թակելով: Եկեղեցական պաշտամունք և կրոնական որևէ նշան արգելված էր: Ես եղեգի ճյուղերից շինված փոքր խաչ ունեի, որն ինձ համար պատրաստել էր մի բանտարկյալ բարեկամ՝ ինքնիրեն մեծ վտանգի տակ դնելով: Գիտեի, որ վիետնամցի պահակները երբեք թույլ չէին տա, որ այդ խաչն ունենամ, ուստի մի գրքույկի մեջ էի պահել այն: Յերեկները գրքույկն անկողնուս տակ էի պահում, իսկ գիշերները, խաչը ձեռքիս մեջ բռնած, աղոթում էի, որովհետև այդպես անելով՝ հոգեկան մեծ խաղաղություն էի զգում: Մի քանի ամիս հետո լսեցի նրա հաղթական քրքիջը: Նա գտել էր խաչս: ‘Դուրս գալով խցից՝ աչքիս առջև կտոր-կտոր արեց այն և բաց կոյուղու մեջ նետեց: Շատ զայրացած էի, բայց անօգնական: Վիետնամցի տարեց բանվորները դիտում էին պատահածը: Պահակը հրահանգեց, որ իմ խցում աշխատեն: Կես ժամ անց գործն ավարտված էր: Ես վերադարձա իմ խուց: Անմիջապես անկողնուս տակ նայեցի, գտա գրքույկը և բարկությունից սկսեցի պատռել այն: Հանկարծ զգացի, որ մի հաստ բան կա էջերում պահված: Մի խաչ էր: Ակնհայտ էր, որ վիետնամցի բանվորների գործն էր: Սարսուռացի, երբ մտածեցի այն ահռելի պատժի մասին, որին կարող էին ենթարկվել նրանք, եթե բռնվեին:

Այդ գիշեր, մինչ նոր խաչս բռնած աղոթում էի, անդրադարձա ուրիշ ճշմարտության, որ ինձ շատ ավելի հոգեկան խաղաղություն և հույս ներշնչեց ապագայի նկատմամբ: Հակառակ տարբեր կառավարությունների որդեգրած կուսակցավարություններին, որոնք թշնամի

են դարձնում անձանոթ մարդկանց, Աստծո գերբնական սերը կարող է մեզ Քրիստոսով եղբայրներ դարձնել»: «Վասն զի դուք ամենդ ակ մէկ էք Քրիստոս Յիսուսով» (Գաղ. 3:28):

Քաղված՝ «Օրհնաբեր նոնենիւն» գրքից

## **Եթե Հիսուսը հիմա գար**

**Ե**թե Հիսուսը հիմա գար և միտքս գտներ շատ գեղեցիկ խորհուրդներով ու ծրագրերով լի, որոնց մեջ Ինքը որևէ բաժին չունի, ի՞նչ կասեր ինձ:

Եթե Հիսուսը հիմա գար և սերս սառած գտներ Իր հանդեպ, հավատքս՝ տկար և թույլ, Իրեն չսպասող, անհոգ ու անտարբեր վիճակում, ի՞նչ կասեր ինձ:

Եթե Հիսուսը հիմա գար և ինձ գտներ անձնասեր, ով որևէ մեկին չի պատմել Իր և փրկության մասին, որի բյուրավոր օրհնությունները վայելել է, ի՞նչ կասեր ինձ:

Եթե Հիսուսը հիմա գար և ինձ գտներ անհաշտ, քինախնդիր հավատացյալների և մեղավորների հետ, ի՞նչ կասեր ինձ:

Եթե Հիսուսը հիմա գար և ինձ գտներ անհավատարիմ, քնած, ճրագս մարած, ծառայակիցների հետ կովող, սիրտս կերուխումով, գինովությանմբ և աշխարհային զբաղմունքներով ծանրացած, ի՞նչ կասեր ինձ:

Եթե Հիսուսը հիմա գար, արդյոք ուրախ կլինե՞ր ինձ համար, որ արթուն եմ և Հոգով լի կյանք եմ ապրել Իր շնորհով, Իրեն դավանել եմ մարդկանց առջև և փառավորել խոսքով, կյանքով ու վարմունքով: Այն ժամանակ կասեր. «Լա՛վ, բարի և հավատարի՛մ ծառա, քիչ բաների վրա հավատարիմ եղար, ես քեզ շատ բաների վրա կդնեմ. մտի՛ր քո տիրոջ ուրախության մեջ» (Մատթ. 25:23):

Քաղված

## Լորբիով լի կողովը

«Երբ երեկո եղավ, Նա տասներկուսի հետ սեղան նստեց: Եվ մինչ ուտում էին, Նա ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ձեզնից մեկը մատնելու է Ինձ»: Եվ նրանք շատ տրտմեցին, ու նրանցից ամեն մեկը սկսեց ասել Նրան. «Տե՛ր, մի՞թե ե՞ս եմ»: Եվ Նա պատասխանեց ու ասաց. «Նա, ով Ինձ հետ իր ձեռքը ամանի մեջ տարավ, նա է Ինձ մատնելու: Մարդու Որդին կզնա, ինչպես գրված է Նրա համար. բայց վա՛յ այն մարդուն, որի ձեռքով Մարդու Որդին կմատնվի: Լավ կլիներ այն մարդու համար, եթե ինքը ծնված չլիներ»: Հուդան, որ Նրան մատնելու էր, պատասխանեց ու ասաց. «Վարդապե՛տ, մի՞թե ե՞ս եմ»: Նա էլ ասաց նրան՝ «Դու՛ ասացիր»:» (Մատթ. 26:20-25):

Մի քարոզիչ հետևյալն էր պատմել. «Անցյալ օրը, երբ քայլում էի փողոցով, խոզերի բոլով տեսա: Մա հետաքրքրությունս այնքան արթնացրեց, որ որոշեցի հետևել: Շատ զարմացա, երբ իմացա, որ նրանք սպանդանոց էին տարվում: Խոզերին առաջնորդող մարդուն հարցրի.

- Բարեկա՛ն, ինչպե՞ս կարողացար մինչև այստեղ բերել դրանց:
- Օ՛հ, չտեսա՞ր՝ թևիս տակ լորբիներով լի կողով ունեի: Երբեմն գետնին էի թափում լոբու հատիկները, իսկ սրանք գառնուկների պես ինձ էին հետևում մինչև այստեղ, - պատասխանեց մարդը:

Այո՛, սատանան նույնպես իր լորբիներն ամեն տեղ ցանում է, և բազմություններ գնում են դեպի հավիտենական սպանդանոց (դժոխք): Դու՛, սիրելի և թանկագին հոգի, խաբվողներից չլինես:

Պետրոս առաքյալն ասում է. «Արթո՛ւն մնացե՛ք, հսկեցե՛ք, որովհետև ձեր հակառակորդը՝ սատանան, մռնչացող առյուծի պես պտրտվում ու փնտրում է՝ թե ո՛ւմ կուլ տա» (Ա Պետ. 5:8)

Վերապատվելի՛ Արրահամ Սարգիսյան  
Քաղված՝ «Օրեօր» գրքից

## Արևշատ գյուղում

Արևշատ նշանակում է շատ արև: Այն Հայաստանի փոքր գյուղերից մեկն է: Մի քանի տարի առաջ այնտեղ այցելել էի կարիքավոր մի քանի ընտանիքի՝ աղոթելու նպատակով: Ներս մտանք մի հսկայական սենյակ, որտեղ ոչինչ չկար: Ո՛չ կահույք կար, ո՛չ էլ պատից կախված նկար: Սենյակն ուներ ընդամենը մեկ պատուհան և մեկ դուռ: Երբ հաջորդ սենյակ մտա, տեսա դրված չորս մահճակալ՝ յուրաքանչյուրը մեկ անկյունում:

Գյուղացին ամուսնացած էր և ուներ երկու հաշմանդամ դուստր: Մեկը մոտավորապես քսան տարեկան էր և մանկությունից ի վեր մտքի խանգարում ուներ, երբեք չէր քայլել և որևէ բանի չէր արձագանքել: Ամբողջ օրն անկողնու մեջ էր: Երկրորդ աղջիկը հաշմանդամ էր՝ սայլակի մեջ նստած, և փոքր-ինչ անհանգիստ տեսք ուներ:

Մայրը հրաժարվել էր հաշմանդամ դուստրերի մասին հոգ տանելուց և լքել էր տունը: Հայրը երկրորդ անգամ էր ամուսնացել, ուստի երկրորդ կինն էր հոգում նրանց մասին:

Հայրը սայլակի մեջ նստած աղջկան խնդրեց պատմել անձնական վկայությունը: Ես շատ զարմացա, քանի որ չէի պատկերացնում, որ նա կարող է խոսել, առավել ևս՝ վկայություն տալ: Ժպիտը դեմքին՝ ինձ նայեց ու հարցրեց, թե արդյոք ցանկանո՞ւմ եմ լսել իր վկայությունը:

Ամբողջ մարմինս փշաքաղվեց, երբ նա սկսեց շարադրել իր խոսքերը.

«Ծնված օրից ոչ ոք ինձ չի սիրել, իսկ մայրս մանկությունից ի վեր լքել է ինձ: Ես այլևս ապրել չէի ուզում, բայց լսեցի Հիսուսի սիրո մասին, և իմ ամբողջ կյանքը փոխվեց: Նա կյանքիս մեջ նոր ուրախություն և հույս բերեց: Ես Տեր Հիսուսից մեկ բան եմ խնդրում. ոչ թե ինձ առողջացնի ու կարողանամ քայլել, այլ ինձ լավացնի, որ կարողանամ ծնկի գալ ու երկրպագել Իրեն»:

Աչքերս արցունքոտվեցին, սակայն ոչ թե նրանց պայմանների կամ իրավիճակի համար, այլ որովհետև զարմացա Տեր Հիսուսի հանդեպ նրա ունեցած հավատքի վրա: Տնից 12,000 կմ հեռավորության վրա՝ Արևշատ գյուղում սկսեցի զարմանալ, թե որտեղից ուներ այսպիսի հավատք:

Տերը հավատարիմ է ու գթառատ. «Ահա, Իսրայելի Պահապանը ո՛չ ննջելու, ո՛չ էլ քնով է անցնելու»: Մենք թերևս մոռանանք աղքատներին ու որբևայրիներին, սակայն Նրա աչքերը միշտ նրանց վրա են:

Այո՛, մենք Հայաստան ենք այցելում, որպեսզի Քրիստոսով քաջալերենք այդ մարդկանց, սակայն հաճախ նրանք են մեզ քաջալերում ու զարմացնում իրենց հավատքով:

Հիշե՛ք նրանց, ովքեր կարիքի ու նեղության մեջ են, և աղոթե՛ք նրանց համար: ACM-ը նվիրված է Ավետարանն ամենաաղքատ մարդկանց հասցնելուն:

Հ. Գ.